

# Մարգարեա Համբարձում Մաթեոսյանի խոսքը Հաշմանդամների միջազգային օրվա կապակցությամբ 03.12.2018



Ինչպես գիտենք, 1992 թվականից Միավորված Ազգերի Կազմակերպության գլխավոր ասամբլեայի որոշմամբ դեկտեմբերի 3-ը հռչակվել է Հաշմանդամների միջազգային օր: Թերեւս, այս օրը տոն չէ, սակայն առիթ է մեկ անգամ եւս բարձրաձայնելու հաշմանդամություն ունեցող անձանց դեռեւս չլուծված խնդիրների մասին՝ պատկան մարմինների, հանրության ուշադրությունը հրավիրելով դրանց լուծման վրա:

Ինչ խոսք, յուրաքանչյուրս մեր տեղում եւ մեր լիազորությունների շրջանակում գործուն քայլեր պետք է ձեռնարկենք հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ հասարակության կողմից ճիշտ վերաբերմունքի ձեւավորման եւ հավասար հնարավորությունների ընկալման ուղղությամբ: Եվ այդ կրքերի նրան, որ հաշմանդամները լիիրավ մաս կկազմեն երկրի հասարակական, քաղաքական եւ մշակութային կյանքին՝ իրենց դրական ներդրումն ունենալով պետականաշինության գործում:

Հստակ գիտակցելով ոլորտում առկա խնդիրների բազմազանությունն ու դրանց լուծման հարցում նաեւ իմ մասնակցության չափը՝ վստահ եմ, որ համախմբված եւ հետեւողական աշխատանքի արդյունքում կկարողանանք հաջողություն գրանցել հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերող շատ ու շատ հարցերում: Իսկ մեր երկիրը եւ, ընդհանրապէս, աշխարհն ամենից առաջ ոգով ու դատողությամբ առողջ մարդկանց կարիքն ունի:

Առողջություն եւ հաստատակամություն բոլորիս: